## ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ARM-C 158/15
## «ԿՈՐՊՈՐԱՏԻՎ VPN» ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

25.05.2015թ. ք. Երևան

«Արմենիա Տելեֆոն Կոմպանի» («ԱրմենՏել») փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Օպերատոր», որը գործում է համաձայն թիվ 60 լիցենզիայի և ընկերության կանոնակարգի, ի դեմս Լիազորված անձ (լիազորագիր N00212/15 01.04.2015թ-ից)՝ Գոռ Զատիկյանի, մի կողմից և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ. Թովմասյանի, մյուս կողմից, այսուհետ՝ «Բաժանորդ», որը գործում է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ երկուսը միասին՝ «Կողմեր», կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին՝

Սույն պայմանագրի դրույթները, կողմերի իրավունքներն ու պարտականությունները պետք է մեկնաբանվեն հետևյալ սահմանումները հաշվի առնելով՝

**Օպերատոր** - «ԱրմենՏել» ՓԲԸ, որը պատշաճ լիազորված է Կարգավորող մարմնի կողմից էլեկտրոնային հեռահաղորդակցության ծառայությունների մատուցման նպատակով տնօրինելու և շահագործելու հանրային էլեկտրոնային հեռահաղորդակցության ցանցը:

**Բաժանորդ** – իրավաբանական անձ, որը Օպերատորի հետ կնքել է «Կորպորատիվ VPN» ծառայության պայմանագիրը:

**Տվյալների փոխանցման ցանց** - Օպերատորի սեփականությունը հանդիսացող տվյալների փոխանցման համակարգ, որը կապում է Օպերատորի տվյալների փոխանցման հանգույցները ՀՀ տարածքում (ըստ տարածքների) կամ ՀՀ տարածքից դուրս գտնվող հանգույցներին, որի միջոցով ապահովվում է Բաժանորդի տվյալների փոխանցման կորպորատիվ VPN ցանցի կազմակերպումը:

**Տվյալների փոխանցման կորպորատիվ VPN ցանց** - վիրտուալ ցանց, որը կազմակերպվում է բաժանորդի պահանջով՝ օգտագործելով Օպերատորի տվյալների փոխանցման ցանցի ենթակառուցվածքը՝ VPN ցանցում միմյանց հետ միացված վերջնակետերի միջև IP պրոտոկոլի փոխանցմամբ հաղորդակցությունը ապահովելու համար և օգտագործվում է բաժանորդի կողմից իրեն պատկանող լոկալ ցանցերը և/կամ սարքավորումները միացնելու նպատակով:

**Համակցման պորտ** – Օպերատորի տվյալների փոխանցման ցանցի հանգույցների սարքավորումների վրա հատկացված համակցման կետ:

**Վերջին մղոն** - Բաժանորդի վերջնակետային սարքավորումները Օպերատորի տվյալների փոխանցման ցանցին համակցելու տեխնիկական միջոցներ:

**Կորպորատիվ VPN ծառայություն** – Տվյալների փոխանցման կորպորատիվ VPN ցանցի կազմակերպում և դրա բնականոն աշխատանքի ապահովում: VPN ծառայությունը չի ներառում Բաժանորդի կողմից տնօրինվող ենթակառուցվածքի և/կամ սարքավորումների աշխատունակության ապահովումը:

## ДОГОВОР ARM-C 158/15
## НА ПРЕДОСТАВЛЕНИЕ УСЛУГИ «КОРПОРАТИВНЫЙ VPN»

25.05.2015г. г. Ереван

Закрытое акционерное общесво «АрменТел», именуемое в дальнейшем «Оператор», действующее в соответствии с Лицензией N60, в лице доверенного лица (доверенность N00212/15 от 01.04.2015г. ) Гора Затикяна, с одной стороны, и Аппарат Национального собрания РА, именуемое в дальнейшем «Абонент», в лице руководителя аппарата Г. Товмасяна, действующего на основании Устава Аппарата Национального собрания РА, с другой стороны, заключили настоящий договор о следующем:

Положения настоящего договора, права и обязанности Сторон будут комментироваться в соответствии следущими определениями

**Оператор** - ЗАО «АрменТел», уполномоченный в соответствии с законодательством РА владеть и эксплуатировать сеть общественной электронной телекоммуникации для предоставления услуг электронной телекоммуникации.

**Абонент** - юридическое лицо, заключившее с Оператором договор о предоставлении услуги «Корпоративная VPN»

**Сеть передачи данных** – Сеть передачи данных Оператора, в которой соединяются узлы передачи данных Оператора на территории РА (по регионам) или вне территории РА, посредством которой обеспечивается организация корпоративной VPN сети передачи данных Абонента.

**Корпоративная VPN сеть передачи данных** – виртуальная сеть, которая организовывается по требованию Абонента, при использовании инфраструктуры сети передачи данных Оператора для обеспечения посредством передачи IP протокола для объединения удаленных локальных сетей и/или устройств в VPN сети Абонента.

**«Порт соединения»** - Выделенные точки подключения на устройствах узлов сети передачи данных Оператора

**Последняя миля** - технические средства для подключения оконечных устройств Абонента к сети передачи данных Оператора.

**Услуга «Корпоративной VPN»** – организация Корпоративной VPN сети передачи данных и обеспечение ее нормальное функционирования. Услуга «Корпоративная VPN» не включает обеспечение функционирования инфраструктуры и/или устройств, находящихся в распоряжении Абонента.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Օպերատորը վարձի դիմաց, առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում, Բաժանորդին մատուցում է Կորպորատիվ VPN ծառայությունը (այսուհետ «Ծառայություն»), որի քանակական և տեխնիկական տվյալներն ու նկարագրությունները ընդգրկված են սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 2 հավելվածում:

### 1. ПРЕДМЕТ ДОГОВОРА

1.1 Оператор за плату, при наличии технических возможностей, предоставляет Абоненту Услугу «Корпоративный VPN» (далее: «Услуга»), технические, количественные данные и описания которых включены в приложениях N 2, являющихся неотъемлемой частью настоящего договора.

### 2. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Սույն պայմանագրով Օպերատորի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 259200 (երկու հարյուր հիսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ծառայությունները բաժանորդին մատուցվում են սույն պայմանագրին կից թիվ №2 հավելվածում նշված սակագներով:

2.2 Գինը ներառում է Օպերատորի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.3 Ծառայության մատուցման գինը կայուն է և Օպերատորն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Բաժանորդին նվազեցնելու այդ գինը:

2.4 Օպերատորն էլեկտրոնային փոստով Բաժանորդին է ներկայացնում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող Հավելված 1-ով ամրագրված օրինակելի ձևին համապատասխան կազմված հանձնման-ընդունման արձանագրություն և հարկային հաշիվ, իսկ Բաժանորդը իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Օպերատորի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո,

### 2. СТОИМОСТЬ УСЛУГ И ПОРЯДОК РАСЧЕТА

2.1 Общая сумма (цена договора), подлежащая оплате “Абонентом” “Оператору” за предоставление Услуги согласно настоящему договору, составляет 259200 (двести пятьдесят девять тысяч двести) драм РА (включая НДС). Услуги предоставляются по тарифам, указанным в Приложении №2 настоящего договора.

2.2 Цена включает все затраты Оператора, в том числе налоги, сборы и другие платежи установленные законодательством РА.

2.3 Цена предоставления Услуги стабильна и Оператор не имеет права требовать повышения, а Абонент – понижения этой цены.

2.4 Оператор по электорнной почте предоставляет Абоненту Протокол прием-сдачи и счет по типовым формам, закрепленным соответственно в Приложении 1, а Абонент оплачивает за оказываемые услуги безналично, путем перечисления денежных средств на расчетный счет Оператора. Денежные переводы, предусмотренные к оплате , осуществляются на основании протокола приема-передачи в соответствии с графиком оплат, установленным Приложением N 1 на данный месяц (если протокол составлен после 20-го числа данного месяца, то оплата планируется в течение 20 банковских дней), но не более запланированной суммы на данный период., за

| | |
|---|---|
| ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից, բացառությամբ դեկտեմբեր ամսվա ընթացքում մատուցված ծառայությունների համար վճարման ենթակա գումարների, որը վճարվում է տվյալ տարվա դեկտեմբեր ամսին, սակայն ոչ ուշ քան 2015թ. դեկտեմբերի 30-ը: | исключением сумм, подлежащих оплате за услуги, оказанные в декабре, которые выплачиваются в течение декабря текущего года, но не позднее. 30 декабря 2015 года. |
| **3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** | **3. ПРАВА И ОБЯЗАНОСТИ СТОРОН** |
| 3.1 Օպերատորը Բաժանորդին Ծառայություն է մատուցում՝ համաձայն սույն պայմանագրի դրույթների: | 3.1 Оператор предоставляет Услуги Абоненту в соответствии с условиями настоящего Договора |
| 3.2 Բաժանորդը՝ պարտավոր է սույն պայմանագրով նախատեսված ծառայությունը ստանալու համար, սույն պայմանագրի կնքման ***5*** օրվա ընթացքում, Օպերատորի կողմից ցանցը ստեղծումից առաջ տեղադրել անհրաժեշտ վերջնակետային սարքավորումներ: | 3.2 Для получения услуги, Абонент, в течении ***5*** дней с момента подписания настоящего договора, обязуется установить оконечное оборудование к моменту построения Корпоративной сети данных Оператором. |
| 3.3 Բաժանորդը պարտավոր է սույն պայմանագրով նախատեսված ծառայությունը ստանալու համար Օպերատորին ներկայացնել վերջնակետային սարքավորման և պահանջվող միացման տեսակը: | 3.3 Абонент обязан указать тип оконечного оборудования и требуемого соединения для получения услуг, предусмотренных настоящим договором. |
| 3.3.1 Բաժանորդը պարտավոր է Օպերատորի սեփականությունը հանդիսացող սարքավորումները (DSL սարքավորումը և այլն) տեղադրելուց և համապատասխան միացումները ստուգելուց հետո կազմել համապատասխան ընդունման-հանձնման ակտ(Հավելված 1.1): | 3.3.1 Абонент обязан после установки и проверки соответствующих соединений устройств (DSL устройства и т.д.), являющихся собственностью Оператора составить соответствующий акт приема-сдачи(Приложение N 1). |
| 3.4 Օպերատորի սարքավորումների հետ կապված պլանային աշխատանքներ կատարելու դեպքում՝ Օպերատորը պարտավորվում է Ծառայության մատուցման ժամանակավոր դադարեցման մասին գրավոր ծանուցել Բաժանորդին այդպիսի աշխատանքներ սկսելու օրվանից առնվազն 10 (տասը) աշխատանքային օր առաջ: | 3.4 Оператор обязуется письменно уведомить Абонента о временном приостановлении предоставления Услуги, в случае проведения плановых работ на оборудовании Оператора, как минимум за 10 рабочих дней до проведения указанных работ. |
| 3.5 Օպերատորը իրավունք ունի դադարեցնել Ծառայության մատուցումը 3.4 կետում նախատեսված դեպքում ամսական 24 ժամից ոչ ավել: | 3.5 Оператор имеет право приостановить оказание Услуги в случае, предусмотренным пунктом 3.4 настоящего Договора, суммарно не более чем на 24 часа ежемесячно. |
| 3.6 Օպերատորի սարքավորման հետ կապված վթարի, վնասի և այլ խնդիրների առաջացման դեպքում Օպերատորն իրավունք ունի ժամանակավոր դադարեցնել Ծառայության մատուցումը՝ Բաժանորդին տեղեկացնելով Պայմանագրի 3.7 կետով նախատեսված ժամկետում: | 3.6 В случае аварий, повреждений и иных проблем, возникающих с оборудованием Оператора, Оператор имеет право приостановить предоставление Услуги обязуясь уведомить Абонента о временном приостановлении в сроки предусмотренные в пункте 3.7. |
| 3.7 Սույն պայմանագրի 3.6 կետով սահմանված դեպքերի առաջանալու դեպքում, Օպերատորը պարտավոր է Ծառայության դադարեցման պահից երկու ժամվա ընթացքում սույն պայմանագրի 3.15 կետով նշված անձին ուղարկել Ծառայության մատուցման ժամանակավոր դադարեցման մասին տեղեկություն: | 3.7 Оператор обязан при наступлении случаев, предусмотренных пунктом 3.6 в течении 2 часов с момента приостановления Услуги, направить лицу, указанному в пункте 3.15 настоящего Договора, информацию о временном прекращении предоставления Услуги. |
| 3.8 Օպերատորը ձեռնարկում է անհրաժեշտ քայլեր Տվյալների փոխանցման ցանցում տեղի ունեցած կապի ընդհատումները հնարավորինս արագ վերականգնելու համար, իսկ Բաժանորդի պահանջի դեպքում կատարում է Ծառայության համար սահմանված ամսական վարձերի վերահաշվարկ՝ ըստ Բաժանորդի VPN ցանցի չաշխատած համակցման պորտերի քանակի, արագությունների ու տևողության՝ հաշվի առնելով VPN ցանցի տոպոլոգիան: | 3.8 Оператор обязан предпринять все необходимые меры для срочного устранения сбоев, аварий в сети передачи данных, а в случае требования Абонента, обязан произвести перерасчет месячных плат за Услугу в соответствии с количеством неработающих портов, скоростей и периода прерывания услуги в сети VPN, с учетом топологии VPN сети. |
| 3.9 Օպերատորը իրավունք ունի, 5 աշխատանքային օրվա ընթացքում, զգուշացնելով Բաժանորդին, դադարեցնել կամ կասեցնել Ծառայության մատուցումը, եթե Բաժանորդը սույն պայմանագրի 2.1 կետով սահմանված ժամկետում վճարումները չի կատարում: | 3.9 Оператор имеет право за 5 рабочих дней, письменно предупредив Абонента, прекратить или приостановить предоставление Услуг, если Абонент не осуществляет платежи в сроки, установленные в пункте 2.1 настоящего договора. |
| 3.10 Օպերատորը իրավունք ունի Բաժանորդից պահանջել պատճառած ուղղակի վնասի հատուցում, որը հետևանք է սույն պայմանագրի 4.7 կետով նախատեսված խախտման: | 3.10 Оператор имеет право требовать у Абонента возмещение причиненного прямого ущерба, являющегося результатом нарушения пунктом 4.7 настоящего договора. |
| 3.11 Մատուցվող Ծառայությունից հրաժարվելու կամ պայմանագրի գործողության դադարեցման այլ դեպքերում Բաժանորդը պարտավոր է դադարեցման օրվանից հաշված 10-օրյա ժամկետում ետ վերադարձնել Օպերատորի սեփականությունը հանդիսացող սարքավորումները (DSL սարքավորումը և այլն), որի մասին պետք է կազմվի համապատասխան ակտ: | 3.11 В случае отказа от услуг или в других случаях расторжения договора, Абонент обязан в 10-и дневный срок с момента расторжения, вернуть устройства, являющиеся собственностью Оператора (DSL устройства и т.д.), о чем составляется соответствующий акт. |
| 3.12 Բաժանորդը կարող է օգտագործել իր սարքավորումները, եթե դրանք համատեղելի են Օպերատորի ցանցի հետ և ունեն ՀՀ համապատասխանության սերտիֆիկատ: Բաժանորդին պատկանող սարքավորումների օգտագործումը չի կարող | 3.12 Абонент может использовать свои устройства доступа сети, если они совместимы с сетью Оператора и имеют Сертификат соответствия РА. Использование устройств, принадлежащих Абоненту не может повлечь изменения цен |

հանգեցնել ծառայության համար սահմանված սակագների փոփոխության:

3.13 Բաժանորդը կարող է միակողմանի դադարեցնել պայմանագիրը և հրաժարվել ծառայությունից, եթե համաձայն չէ Օպերատորի կողմից սահմանված նոր սակագների կամ սույն պայմանագրի 7.2 կետով առաջարկվող պայմանագրի փոփոխությունների հետ՝ այդ մասին գրավոր ծանուցելով Օպերատորին համապատասխան փոփոխությունների վերաբերյալ ծանուցումը ստանալուց 10 օրյա ժամկետում առաջնորդվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի դրույթներով:

3.14 Սույն պայմանագրով մատուցվող ծառայությունների հետ կապված հարցերի, այդ թվում՝ խափանումների դեպքերում Բաժանորդը կարող է դիմել «ԱրմենՏել» ՓԲԸ օպերատիվ արձագանքման կենտրոն՝ Հեռ.(3741) 29 00 03, էլ. փոստ helpdesk@beeline.am:

3.15 Բաժանորդը պարտավորվում է նշանակել պատասխանատու անձ՝ Ծառայության շրջանակում տեխնիկական խնդիրները լուծելու համար:

ԱԱՀ՝ _________

Հեռախոս՝ __________

Էլ-փոստ՝ __________

## 4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Բաժանորդը պատասխանատվություն է կրում իր մեղքով Օպերատորի սեփականությունը հանդիսացող սարքավորումների վնասելու և կորստի համար, դրա արժեքի չափով, հաշվի առնելով մաշվածությունը:

4.2 Օպերատորը պատասխանատվություն չի կրում Բաժանորդի տեխնիկական միջոցների անսարքությունների հետևանքով կամ Օպերատորին չառնչվող այլ պատճառներով կապի խափանումների և որակի վատացման համար:

4.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Օպերատորից գանձվում է տույժ՝ խախտում կատարելու ամսվա դրությամբ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

4.4 Պայմանագրի գործողության ցանկացած դադարեցում Կողմերին չի ազատում միմյանց հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունների կատարումից:

4.5 Կողմերը պատասխանատվություն են կրում միայն ուղղակի, ապացուցված վնասների համար (իրական վնաս), որոնք հասցվել են մյուս Կողմին՝ պայմանագրի կատարման ընթացքում: Անուղղակի կորուստներն ու վնասները, չստացված եկամուտները, ինչպես նաև բաց թողնված օգուտը փոխհատուցման ենթակա չեն:

4.6 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում Օպերատորից գանձվում է տուգանք՝ խախտում կատարելու ամսվա դրությամբ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

4.7 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.1 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

## 5. ՖՈՐՍ ՄԱԺՈՐ

5.1 Կողմերը պատասխանատվություն չեն կրում պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման անհնարինության դեպքերում, եթե այն առաջացել է այնպիսի հանգամանքների պատճառով, որոնք վրա են հասել Կողմերի կամքից անկախ (երկրաշարժ, ջրհեղեղ, պատերազմ, ռազմական և արտակարգ իրավիճակ հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն՝ ֆորս մաժոր), որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով Կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը: Ֆորս մաժորային հանգամանքների ազդեցության ներքո հայտնված Կողմը գրավոր տեղեկացնում է այդ մասին մյուս Կողմին՝ այդ հանգամանքների առաջացման պահից սկսած 5 օրվա ընթացքում: Եթե ֆորս մաժորային հանգամանքը տևում է

на Услугу.

3.13 Абонент может в одностороннем порядке расторгнуть договор и отказаться от услуг при несогласии с новыми ценами Оператора или изменениями договора, предусмотренные в соответствии с пунктом 7.2 настоящего договора, письменно уведомив об этом Оператора в 10-дневный срок с даты получения оповещения о соответствующих изменениях, руководствуясь статьями закона РА о << Закупках>>.

3.14 По вопросам, связанным с услугой, предоставляемой по настоящему договору, в том числе по вопросам прерывания услуги, Абонент может обращаться в центр оперативного реагирования по телефонам: 290003, Эл.почтой: helpdesk@beeline.am

3.15 Абонент обязуется назначить ответственное лицо для решения технических вопросов в рамках данной Услуги:

ФИО: ______

Тел: _______

E-mail: ______

## 4. ОТВЕТСТВЕННОСТЬ СТОРОН

4.1 Абонент несет ответственность за утерю или повреждение устройств доступа сети, принадлежащих Оператору, в размере их стоимости с учетом амортизации.

4.2 Оператор не несет ответственности за ухудшения качества связи и повреждения в следствии технических неисправностей технического оборудования Абонента или вследствие иных причин не касающихся Оператора.

4.3 В случае нарушения Оператором сроков оказания услуги, установленных настоящим Договором, с Оператора взымается пеня в размере 0,05 процентов от суммы договора по состоянию на месяц, которая расчитывается колендарными днями на часть суммы, когда имело место нарушение.

4.4 Расторжение договора по любым причинам не освобождает Стороны от выполнения имеющихся взаимных финансовых обязательств.

4.5 Стороны несут ответственность только за прямой, доказанный ущерб (реальный ущерб), нанесенный другой стороне в срок действия настоящего договора. Непрямые потери и ущерб, а также неполученные доходы и упущенные выгоды не подлежат возмещению.

4.6 В случае неисполнения обязательств по настоящему договору с Оператора взымается штраф в размере 0,5 (ноль целых пять десятых) процентов от суммы договора по состоянию на месяц, когда имело место нарушение.

4.7 В случае нарушения сроков оплаты, указанных в пунктах 2.1 и/или настоящего договора Оператор может применить по отношению к Абоненту пеню в размере 0.05% (ноль целых пять сотых) от невыплаченной суммы за каждый день просрочки.

## 5. ФОРС МАЖОР

5.1 Стороны не несут ответственности за невыполнение договорных обязательств, если причинами невыполнения этих обязательств явилось возникновение непреодолимой силы, (землетрясение, наводнение, война, объявление военного и чрезвычайного положения, политические волнения, забастовки, приостановка работы средств связи, акты государственных органов и др.,) которые делают выполнение обязательств установленных настоящим договором невозможными. Сторона, оказавшаяся под влиянием форс-мажорных обстоятельств должна в течение 5 дней с момента наступления таких обстоятельств письменно известить об этом другую сторону. Если влияние непреодолимой силы (форс мажор) длится более двух месяцев, то каждая из сторон вправе расторгнуть договор, заранее известив об этом другую сторону

երկու ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի լուծել սույն պայմանագիրը այդ մասին գրավոր տեղեկացնելով մյուս կողմին:

## 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

6.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 2015 թվականի հունվարի 24-ից Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Պայմանագիրը գործում է մեկ տարի ժամկետով և եթե ժամկետի լրանալուց մեկ ամիս առաջ Կողմերից որևէ մեկը առաջարկություն չի ներկայացնում այն դադարեցնելու մասին, ապա պայմանագիրը համարվում է երկարաձգված հաջորդ մեկ տարով:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման անհնարինության առաջացման դեպքում Օպերատորը իրավունք ունի միակողմանի վաղաժամկետ դադարեցնել սույն Պայմանագիրը՝ այդ մասին նախապես Բաժանորդին 10 /տաս/ աշխատանքային օր առաջ գրավոր (կամ էլեկտրոնային փոստով) տեղեկացնելուց հետո:

6.3 Օպերատորը իրավունք ունի լուծել պայմանագիրը, եթե Բաժանորդը կխախտի սույն պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները:

## 7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

7.1 Ծառայությունը Օպերատորի կողմից ակտիվացվում է 3.3.1 կետով սահմանված կարգով ընդունման-հանձնման ակտ ստորագրելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ բացառությամբ այն դեպքերի, երբ անհրաժեշտ է կատարել կառուցման աշխատանքներ: Այս դեպքում Ծառայության ակտիվացումը կատարվում է Կողմերի փոխհամաձայնեցված ժամկետներում:

7.2 Տվյալների փոխանցման ցանցի ենթակառուցվածքի փոփոխության կամ տեխնիկական այլ վերազինումների դեպքերում Օպերատորը կարող է փոփոխություններ կատարել սույն պայմանագրում՝ այդ մասին գրավոր (կամ էլեկտրոնային փոստով) տեղեկացնելով Բաժանորդին մեկ ամիս առաջ:

7.3 Բաժանորդի կողմից VPN ցանցի քանակական և տեխնիկական տվյալների ու նկարագրությունների փոփոխության վերաբերյալ հայտի ներկայացման դեպքում Օպերատորը այն կարող է բավարարել իր մոտ տեխնիկական պայմանների առկայության դեպքում՝ Օպերատորի կողմից սահմանված վարձը վճարելուց հետո:

7.4 Բացառությամբ սույն պայմանագրով նշված դեպքերի՝ պայմանագրում լրացումներ, փոփոխություններ, կարող են կատարվել միայն երկկողմանի գրավոր համաձայնությամբ հավելվածի ձևով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.5 Պայմանագրի շուրջ ծագած վեճերը կարգավորվում են բանակցությունների միջոցով, համաձայնության չգալու դեպքում դրանք լուծվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.6 Պայմանագիրը կազմված է հայերեն, ռուսերեն լեզուներով, երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Հակասությունների դեպքում գերակայում է հայերեն տարբերակը:

## 6. СРОК ДЕЙСТВИЯ ДОГОВОРА

6.1 Договор вступает в силу с момента подписания его Сторонами и действует в отношение обязательств Сторон фактически возникших с 24 января 2015 года. Договор считается действительным в течение одного года и, если в течении одного месяца до момента истечения срока действия настоящего договора ни одна из Сторон не представляет другой стороне предложение о прекращении договора, то договор считается продленным на следующий год.

6.2 В случае возникновения обстоятельств, делающих невозможным предоставление услуги по настоящему договору, Оператор имеет право досрочно расторгнуть настоящий договор в одностороннем порядке письменно (или по электронной почте) за 10 (десять) рабочих дней оповестив об этом Абонента.

6.3 Оператор имеет право расторгнуть договор, если Абонент нарушит свои обязательства по настоящему договору.

## 7. ПРОЧИЕ УСЛОВИЯ

7.1 Услуга активируется Оператором в течение 5 рабочих дней после подписания акта о прием-сдаче, в порядке, установленном пунктом3.3.1 за исключением случаев, когда требуется выполнение строительных работ. В этом случае Услуга активируется во взаимосогласованный срок.

7.2 В случае изменения инфраструктуры сети передачи данных или иного технического перевооружения, Оператор может внести изменения в настоящий договор, письменно (или по электронной почте) известив Абонента за месяц.

7.3 В случае предъявления Абонентом заявки на осуществление изменений технических, количественных данных или спецификаций VPN сети Оператор может удовлетворить ее при наличии технических условий, после произведения Абонентом платы, установленной Оператором.

7.4 За исключением случаев, предусмотренных настоящим договором, все дополнения, изменения к настоящему Договору производятся в письменной форме в виде приложения и являются неотъемлемой частью Договора

7.5 Споры, возникшие между Сторонами, регулируются путем переговоров. При не достижении согласия, эти вопросы регулируются законодательством РА.

7.6 Договор составлен на армянском и русском языках, в двух экземплярах, имеющих равную юридическую силу. В случае возникновения противоречий, превалирует вариант договора на армянском языке.

| «Օպերատոր» | «Оператор» | «Բաժանորդ» | «Абонент» |
|---|---|---|---|
| «ԱրմենՏել» ՓԲԸ | ЗАО «АрменТел» | ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ | Аппарат Национального собрания РА |
| ք. Երևան, Ահարոնյան 2 | г.Ереван, ул.Агароняна 2 | ք. Երևան, Բաղրամյան 19 | г. Ереван Баграмян 19 |
| «ՀայէկոնոմԲանկ» ԲԲԸ | ОАО «АрмЭкономБанк» | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Департамент операционного МФ РА |
| Հ/Հ 163004038879 | Р/С 163004038879 | Հ/Հ 900011080089 | Р/С 900011080089 |
| ՀՎՀՀ 02500052 | ИНН 02500052 | ՀՎՀՀ 00008519 | ИНН 00008519 |
| Գ.Զատիկյան | Г.Затикян | Հ. Թովմասյան | Г. Товмасян |

Կ.Տ. М.П.

Կ.Տ. М.П.

Հավելված 1.1

**Ակտ ընդունման-հանձնման**
**«Կորպորատիվ VPN» ծառայության շահագործման**
(համարվում է 25.05.2015 թ. կնքված՝ «Կորպորատիվ VPN» ծառայության տրամադրման № ARM-C 158/15 պայմանագրի անբաժանելի մասը)

Իսկական Ակտը կնքված է կողմերի միջև՝
«Օպերատոր« «ԱրմենՏել» ՓԲԸ և
«Հաճախորդ» ՀՀ Նախագահի աշխատակազմ

VPN ցանցի շահագործման ընդունման-հանձնման ակտը, կազմակերպված և կարգավորված համաձայն Հաճախորդի դիմումի, կազմված է «ԱրմենՏել» ՓԲԸ մասնագետների կողմից կատարված թեստ-ստուգման աշխատանքների հիման վրա ___.___.**2015 թ.**

Կողմերը եկան համաձայնության առ այն, որ կազմակերպված «Կորպորատիվ VPN» ցանցը, համապատասխան VPN ծառայության տոպոլոգիայի, աշխատում է նորմալ և տրամադրվում է Հաճախորդին շահագործման համար ___.___.**2015 թ.**
Ծառայությունը տրամադրվում է Հաճախորդին տվյալ ակտը ստորագրելու պահից:

Приложение 1.1

**АКТ ПРИЕМ-СДАЧИ В ЭКСПЛУАТАЦИЮ УСЛУГИ**
**«КОРПОРАТИВНЫЙ VPN»**
(является неотъемлемой частью договора за № ARM-C 158/15 заключенного 25.05.2015 г. на предоставление услуги «Корпоративный VPN»)

Настоящий Акт заключен Сторонами:
«Оператор» ЗАО «АрменТел» и
«Клиент» Аппарат Президента РА

Акт о приеме-сдаче в эксплуатацию сети VPN, организованной и сконфигурированной в соответствии с заявкой Клиента, составлен на основании тестово-проверочных работ проведенных специалистам и ЗАО «АрменТел» ___.___.**2015 г.**

Стороны пришли к заключению, что организованная «Корпоративная VPN» сеть, в соответствии с Топологией услуги VPN, функционирует нормально и предоставлена клиенту в эксплуатацию ___.___.**2015 г.**

Услуга предоставляется Абоненту с момента подписания настоящего Акта.

| **«Օպերատոր»** | **«Оператор»** | **«Բաժանորդ»** | **«Абонент»** |
|---|---|---|---|
| «ԱրմենՏել» ՓԲԸ | ЗАО «АрменТел» | ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ | Аппарат Национального собрания РА |
| ք. Երևան, Ահարոնյան 2 | г.Ереван, ул.Агароняна 2 | ք. Երևան, Բաղրամյան 19 | г. Ереван Баграмян 19 |
| «ՀայԷկոնոմԲանկ» ԲԲԸ | ОАО «АрмЭкономБанк» | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Департамент операционного МФ РА |
| Հ/Հ 163004038879 | Р/С 163004038879 | Հ/Հ 900011080089 | Р/С 900011080089 |
| ՀՎՀՀ 02500052 | ИНН 02500052 | ՀՎՀՀ 00008519 | ИНН 00008519 |
| Գ.Զատիկյան | Г.Затикян | Հ. Թովմասյան | Г. Товмасян |
| Կ.Տ. М.П. | | Կ.Տ. М.П. | |

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«Կորպորատիվ VPN» ծառայության արժեքի հաշվարկ
ՀՀ Նախագահի աշխատակազմ

ПРИЛОЖЕНИЕ 2

Расчет стоимости услуги «Корпоративный VPN»
Аппарат Президента РА

*BAN*

| № | Регион Տարածաշրջան | Тип услуги на данный адрес Տվյալ հասցեում ծառայության տեսակը | Адрес узла Հանգույցի հասցե | Адрес подключения Համակցման հասցե | Скорость Мбит/сек Արագություն Մբիթ/վրկ | Тип подключения Համակցման տեսակը | Единовре-менная плата драм без НДС Միանվագ վճար դրամ առանց ԱԱՀ | Месечная плата драм без НДС Ամսական վճար դրամ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ք.Երևան г. Ереван | Տեղադրում Подключение | TA Կենտրոն / Кентрон | Բաղրամյան 19 | 5 | ՕՄՄ | - | 5,000 |
| 2 | ք.Երևան г. Ереван | Տեղադրում Подключение | TA Կենտրոն / Кентрон | Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 1 / Площадь Республики, Правительственный дом 1 | 5 | ՕՄՄ | - | 5,000 |
| | | | | Ընդամենը Итого : | 10 | | - | 10,000 |

| | |
|---|---|
| 2 VPN ցանցի սպասարկման վճար (անկախ միացված կետերի քանակից) Плата за обслуживание 2-х сети VPN (независимо от количества точек подключения) | 8,000 |

| | |
|---|---|
| Общая единовременная плата (драм) Ընդամենը միանվագ վճար (դրամ) | - |
| ԱԱՀ НДС (20%) | |
| Ընդամենը ԱԱՀ ներառյալ (դրամ) Итого включая НДС (драм) | - |

| | |
|---|---|
| Общая ежемесячная плата (драм) Ընդամենը ամսական վճար (դրամ) | 18,000 |
| ԱԱՀ НДС (20%) | 3,600 |
| Ընդամենը ԱԱՀ ներառյալ (դրամ) Итого включая НДС (драм) | 21,600 |

| «Օպերատոր» | «Оператор» | «Բաժանորդ» | «Абонент» |
|---|---|---|---|
| «ԱրմենՏել» ՓԲԸ | ЗАО «АрменТел» | ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմ | Аппарат Национального собрания РА |
| ք. Երևան, Ահարոնյան 2 | г.Ереван, ул.Агароняна 2 | ք. Երևան, Բաղրամյան 19 | г. Ереван Баграмян 19 |
| «ՀայԷկոնոմԲանկ» ԲԲԸ | ОАО «АрмЭкономБанк» | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Департамент операционного МФ РА |
| Հ/Հ 163004038879 | Р/С 163004038879 | Հ/Հ 900011080089 | Р/С 900011080089 |
| ՀՎՀՀ 02500052 | ИНН 02500052 | ՀՎՀՀ 00008519 | ИНН 00008519 |
| Գ.Զատիկյան | Г.Затикян | Հ. Թովմասյան | Г. Товмасян |
| Կ.Տ. М.П. | | Կ.Տ. М.П. | |

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

25.05.2015թ. կնքված N ARM-C 158/15
պետական գնման պայմանագրի

ք. Երևան 01 դեկտեմբերի 2015թ.

«Արմենիա Տելեֆոն Կոմպանի» («ԱրմենՏել») փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Օպերատոր», որը գործում է համաձայն թիվ 60 լիցենզիայի և ընկերության կանոնակարգի, ի դեմս Լիազորված անձ (լիազորագիր N00212/15 01.04.2015թ-ից)՝ Գոռ Զատիկյանի, մի կողմից և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ. Թովմասյանի, մյուս կողմից, այսուհետ՝ «Բաժանորդ», որը գործում է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ երկուսը միասին՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և 25.05.2015թ. կնքված N ARM-C 158/15 պայմանագրի 7.4 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին:

## 1. Համաձայնագրի առարկան

1.1 Պայմանագրի 2.4 կետի <<սակայն ոչ ուշ քան 2015 թ. դեկտեմբերի 30-ը>> բառերը փոխարինել <<սակայն ոչ ուշ քան յուրաքանչյուր տարվա դեկտեմբերի 30-ը>> բառերով:

1.2 Պայմանագրի 6.1 կետը խմբագրել նոր բովանդակությամբ <<Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է 2015 թվականի հունվարի 24-ից Կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Պայմանագիրը գործում է անժամկետ եթե Կողմերից որևէ մեկը առաջարկություն չի ներկայացնում այն դադարեցնելու>>:

## 2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Օպերատոր | Բաժանորդ |
|---|---|
| «ԱրմենՏել» ՓԲԸ | ՀՀ ԱԺ աշխատակազմ |
| ք. Երևան, Ահարոնյան 2 | ք. Երևան, Մ. Բաղրամյան պող. 19 |
| «ՀայէկոնոմԲանկ» ԲԲԸ | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| Հ/Հ 163004038879 | Հ/Հ 900011020089 |
| ՀՎՀՀ 02500052 | ՀՎՀՀ 00008519 |
| Գ.Զատիկյան | Հ. Թովմասյան |
| ____________ | ____________ |

Հավելված 1

Ակտ ընդունման-հանձնման
«Կորպորատիվ VPN» ծառայության շահագործման
(համարվում է ___.___.2015 թ. կնքված՝ «Կորպորատիվ VPN» ծառայության տրամադրման N ARM-C _________ պայմանագրի անբաժանելի մասը)

Կատարող

______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ________________________
___________________________
հվհհ ______________________

Պատվիրատու

______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ________________________
___________________________
հվհհ ______________________

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

<<____>> <<________________>> 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ ________________________________________
________________________________________________________________
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ <<____>> <<________________>> 20 թ.
Պայմանագրի համարը՝ _________
Պատվիրատուն՝ ի դեմս <<Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար>> է. Մինասյանի և Կատարողը՝ ի դեմս________________________________________________, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները (այսուհետև՝ Ծառայություն) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը __ ________ 20___թ-ից __ ________ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Ծառայությունը

| Գնման առարկայի անվանումը | Գնման առարկայի քանակական ցուցանիշը | Աշխատանքների կատարման ժամկետը | Վճարման ենթակա գումարը (հազար դրամ) | Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի) |
|---|---|---|---|---|
| | | | | |
| | | | | |
| Ընդամենը | | | | |

Ծառայությունը հանձնեց

______________________
ստորագրություն

______________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

Ծառայությունը ընդունեց

______________________
ստորագրություն

______________________
Ազգանուն, Անուն
Կ.Տ.

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

25.05.2015թ. կնքված N ARM-C 158/15
պետական գնման պայմանագրի

ք. Երևան ............03 ապրիլի 2017թ.

«Արմենիա Տելեֆոն Կոմպանի» («ԱրմենՏել») փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Օպերատոր», որը գործում է համաձայն թիվ 60 լիցենզիայի և ընկերության կանոնակարգի, ի դեմս Լիազորված անձ (լիազորագիր N00200/16 29.09.2016թ-ից)՝ Վազգեն Կարապետյանի, մի կողմից և ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Հ. Թովմասյանի, մյուս կողմից, այսուհետ՝ «Բաժանորդ», որը գործում է ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ երկուսը միասին՝ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման /այսուհետ՝ Որոշում/ 60-րդ կետի 2-րդ և 3-րդ ենթակետերով և 25.05.2015թ. կնքված N ARM-C 158/15 պայմանագրի 7.4 կետով փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին:

1. *Համաձայնագրի առարկան*

1.1 Որոշման 60-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Պայմանագրի թիվ 2 հավելվածը խմբագրել նոր բովանդակությամբ, համաձայն թիվ 2-1 հավելվածի:

1.2 Որոշման 60-րդ կետի 2-րդ ենթակետով և Համաձայնագրի 1.1 կետով նախատեսված փոփոխությամբ պայմանավորված Պայմանագրի 2.1 կետում <<ընդհանուր գինը կազմում է 259200 (երկու հարյուր հիսունինը հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:>> բառերը փոխարինել <<ընդհանուր գինը կազմում է 311040 (երեք հարյուր տասնմեկ հազար քառասուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:>> բառերով:

1.3 Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:

2 Այլ պայմաններ

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքված է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3 Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| Օպերատոր | Բաժանորդ |
|---|---|
| «ԱրմենՏել» ՓԲԸ | ՀՀ ԱԺ աշխատակազմ |
| ք. Երևան, Ահարոնյան 2 | ք. Երևան, Մ. Բաղրամյան պող.19 |
| «ՀայԷկոնոմԲանկ» ԲԲԸ | ՀՀ ՖՆ գործառնական վարչություն |
| Հ/Հ 163004038879 | Հ/Հ 900011020089 |
| ՀՎՀՀ 02500052 | ՀՎՀՀ 00008519 |
| Վ. Կարապետյան | Հ. Թովմասյան |
| ____________ | ____________ |

ՀԱՎԵԼՎԱԾ 2-1

«Կորպորատիվ VPN» ծառայության
տրամադրման պայմանագրի
ARM-C 158/15 առ25.05. 2015 թ.
ՀՀ Ազգային ժողով
«Կորպորատիվ VPN» ծառայության արժեքի
հաշվարկ

ПРИЛОЖЕНИЕ 2-1

К договору ARM-C 158/15 от
25.05. 2015 г.
на предоставление услуги
«Корпоративный VPN»
Народное Собрание РА
Расчет стоимости услуги «Корпоративный VPN»

*BAN 118326484*

| № | Регион Տարածա-շրջան | Тип услуги на данный адрес Տվյալ հասցեում ծառայության տեսակը | Адрес узла Հանգույցի հասցե | Адрес подключения Համակցման հասցե | Скорость Мбит/сек Արագություն Մբիթ/վրկ | Тип подключения Համակցման տեսակը | Единовре-менная плата драм без НДС Միանվագ վճար դրամ առանց ԱԱՀ | Месечная плата драм без НДС Ամսական վճար դրամ առանց ԱԱՀ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | ք.Երևան г. Ереван | | TA Կենտրոն / Кентрон | Երևան, Բաղրամյան 19, 1 մասնաշենք Ереван, Баграмяна 19, 1 корпус: бухгалтерия 2 корпус: ком.101 и ком. 129 | 5 | FOC | - | 6,800 |
| 2 | ք.Երևան г. Ереван | | TA Կենտրոն / Кентрон | Երևան, Մ.Ադամյան 1, Կառավարական տուն 1, ՀՀ ՖՆ գանձապետարան Ереван, М.Адамяна 1, МФ РА, казначейство | 5 | FOC | - | 6,800 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընդամենը Итого : | 10 | | - | 13,600 |

| | |
|---|---|
| VPN ցանցի սպասարկման վճար (անկախ միացված կետերի քանակից) Плата за обслуживание сети VPN (независимо от количества точек подключения) | 8,000 դր. |

| | |
|---|---|
| Общая единовременная плата (драм) Ընդամենը միանվագ վճար(դրամ) | - |
| ԱԱՀ НДС (20%) | - |
| Ընդամենը ԱԱՀ ներառյալ (դրամ) Итого включая НДС (драм) | - |

| | |
|---|---|
| Общая ежемесячная плата (драм) Ընդամենը ամսական վճար (դրամ) | 21,600 |
| ԱԱՀ НДС (20%) | 4,320 |
| Ընդամենը ԱԱՀ ներառյալ (դրամ) Итого включая НДС (драм) | 25,920 |

"Օպերատոր"
"Оператор"
Անուն, ազգանուն, ստորագրություն
Имя, фамилия, подпись
Կ.Տ.

"Բաժանորդ"
"Абонент"
Անուն, ազգանուն, ստորագրություն
Имя, фамилия, подпись
Կ.Տ.

«ԱրմենՏել» ՓԲԸ
0014
ՀՀ, ք. Երևան, Ահարոնյան 2
Հեռ.` +37410 289031
Ֆաքս` +37410 289752
www.beeline.am

Beeline®
Պարզ, հարմար, քեզ համար

Լավագույն
գին առաջարկող
կապի օպերատոր

«ArmenTel» CJSC
0014
2, Aharonyan Str., Yerevan, RA
Tel.: +37410 289031
Fax: +37410 289752
www.beeline.am

ք.Երևան, 2017թ. հոկտեմբերի 5
Yerevan, October 5, 2017

Հարգելի Գործընկեր,

Սույնով տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից Ընկերության Կանոնադրության 2017թ. հոկտեմբերի 4-ին գրանցված փոփոխության համաձայն «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ ֆիրմային անվանումը փոփոխվել է։
Ընկերության նոր ֆիրմային անվանումն է՝

- ✓ հայերեն լրիվ՝ «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն
- ✓ հայերեն կրճատ՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ
- ✓ անգլերեն լրիվ՝ "VEON Armenia" closed joint stock company
- ✓ անգլերեն կրճատ՝ "VEON Armenia" CJSC
- ✓ ռուսերեն լրիվ՝ закрытое акционерное общество «ВЕОН Армения»
- ✓ ռուսերեն կրճատ՝ ЗАО "ВЕОН Армения"

Տեղեկացնում ենք նաև, որ Ընկերության ֆիրմային անվանման փոփոխումը որևէ կերպ չի ազդում մեր միջև առկա ընթացիկ գործընկերային հարաբերությունների վրա ու դրանք շարունակում են մնալ ուժի մեջ՝ մեր միջև հաստատված համագործակցության շրջանակներում։

Dear Partner,
Hereby please be informed that as per the amendment to the Company Charter registered by the RA MOJ Agency for State Register of Legal Entities on October 4, 2017 the name of the "Armenia Telephone Company" CJSC has been changed.
The new name of the Company is as follows:

- ✓ in Armenian Company complete name: «ՎԵՈՆ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն
- ✓ in Armenian Company brief name: «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ
- ✓ in English Company complete name: "VEON Armenia" closed joint stock company
- ✓ in English Company brief name: "VEON Armenia" CJSC
- ✓ in Russian Company complete name: закрытое акционерное общество «ВЕОН Армения»
- ✓ in Russian Company brief name: ЗАО "ВЕОН Армения"

We also inform that changing of the Company name does not in any way affect the current partnership relationship between us and they remain in force within the framework of our cooperation.

Best regards/ Հարգանքով,

Ա.Պյատախին/ A.Pyatakhin
Գլխավոր տնօրեն/General Director